



### Բիզնես դրամաշնորհների մրցույթ

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ հայաստանյան ներկայացուցչությունը, ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն շրջանառու միգրացիային և վերաինտեգրմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, հայտարարում է բիզնես դրամաշնորհի մրցույթ: Մրցույթի նպատակն է աջակցել Արմավիր մարզի վերադարձած միգրանտներին իրագործելու սեփական բիզնես նախաձեռնությունները:

Մրցույթին մասնակցելու պարտադիր պայմանները.

Դիմողը պետք է.

- լինի ՀՀ քաղաքացի նախկինում 2 տարի **անընդմեջ** բնակված լինի արտերկրում
- ունենա վավեր անձնագիր
- **կամավոր կերպով** վերադարձած լինի Հայաստան վերջին 1 տարվա ընթացքում
- ներկայումս բնակվի Արմավիրի կամ Արարատի մարզում
- գրանցված լինի Արմավիրի կամ Արարատի մարզերի միգրացիոն ռեսուրս կենտրոններում

Բիզնես դրամաշնորհն ընդգրկում է.

- Գույք և /կամ
- Սարք/ սարքավորումներ

Դրամաշնորհը չի տրամադրվում

- գումարի տեսքով
- շինարարության նպատակով
- հողի գնման նպատակով
- սննդի, գրենական պիտույքների գնման նպատակով
- տարածքի/ սարքավորումների վարձակալության, աշխատանքի վարձատրման նպատակով

Դրամաշնորհը տրվում է 1 500 000(մեկ միլիոն հինգ հարյուր հազար)-ից մինչև 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի շրջանակներում:

Գույքն և/կամ սարք- սարքավորումները ձեռք են բերվում շահառուի ուղարկած հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ գումարն անմիջականորեն փոխանցելով այն ընկերությանը, որտեղից ձեռք են բերվում գույքը կամ սարք-սարքավորումները:

Հանձանժողովի կողմից հավանության արժանացած ու ֆինանսավորվող բիզնես հայտի հեղինակի հետ կնքվում է պայմանագիր, համաձայն որի.

- Դիմորդի ներդրումը պետք է լինի «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության կողմից ակնկալվող դրամաշնորհի առնվազն **20%** -ի չափով (ինչը կարող է ներառել կանխիկ գումար, շենքի կառուցում / վերանորոգում, ենթակառուցվածքի, հողամասի, սարքավորումների գնում, և այլն)
- Հանձանժողովի կողմից հավանության արժանացած ու ֆինանսավորվող բիզնես հայտի հեղինակը պետք է ձեռք բերի իրավաբանական անձի կարգավիճակ, ունենա առանձին բանկային հաշիվ:

- Դրամաշնորհի ստացած շահառուների գործունեությունը մեկ տարվա ընթացքում վերահսկվելու է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ հայաստանյան ներկայացուցչության և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից

**Դիմելու համար պետք է.**

- գրանցված լինել Արմավիրի մարզի միգրացիոն ռեսուրս կենտրոնում մինչև 2013թ. դեկտեմբերի 6-ը
- ներկայացնել մասնակցության լրացված հայտ (հայտը կարելի է ներբեռնել [www.migrant.am](http://www.migrant.am) կայքից կամ ստանալ Արմավիրի)
- մասնակցել 3-օրյա բիզնես դասընթացին, որ տեղի կունենա Արմավիր քաղաքում
- մինչև ս.թ. դեկտեմբերի 27-ը ներկայացնել բիզնես ծրագիր՝ թե՛ էլեկտրոնային և թե՛ տպած տարբերակով

**Ընտրության չափանիշները.**

- Բիզնես ծրագիրը, գաղափարը
- Շուկայական ռազմավարության նկարագրություն
- Հայտատուի փորձը բիզնես և առաջարկվող ծրագրի ոլորտում
- Ֆինանսական կայունությունը (ակնկալվող տարեկան շահույթը, ներդրումների ծրագիրը և այլն)
- Տնտեսական ազդեցությունը համայնքի զարգացման վրա և նոր աշխատատեղերի ստեղծում
- Հայտատուի կողմից տրամադրվող գույքը և սեփական ներդրման չափը (առնվազն 20%)

**Ով չի կարող մասնակցել մրցույթին.**

«Մարդը կարիքի մեջ» և ծրագրի գործընկեր կազմակերպությունների, կենտրոնացված և տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչները, ովքեր ներգրավված են ծրագրում, բոլոր նրանք, ովքեր առնչվում են բիզնես դրամաշնորհի տրամադրման գործընթացին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի անդամները և նրանց ընտանիքի անդամները:

Հիշեք՝	
25 նոյեմբեր 2013	մրցույթի հայտարարում
6 դեկտեմբեր 2013	միգրացիոն ռեսուրս կենտրոնում գրանցվելու վերջնաժամկետ
դեկտեմբեր 2013	3-օրյա պարտադիր բիզնես ծրագրի դասընթաց Արմավիր քաղաքում
27 դեկտեմբեր	բիզնես ծրագիր ներկայացնելու վերջնաժամկետ

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել Արմավիրի միգրացիոն ռեսուրս կենտրոն (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան փ. 137, հեռ.՝ 094 96 00 39):